ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«31» հոկտեմբերի 2014 թվականի № 144-Ն

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակել աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին:

2. Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ մեկամսյա ժամկետում բանավոր և գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հաստատմանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

????? ??????
Oct 31 2014 3:47 PM